

ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԵԾ ԱՎԱՆԴԷ*

Անվանի հայագետ, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Արամ Ղանալանյանը բանագիտության մեջ ընտրել է շտրոքված ու դժվարին մի ուղի՝ նրկար տարիների իր անխոնջ գործունեությամբ նա անընդհատ հարթում է այդ ուղին՝ դարձնելով այն ստեղծագործական լայն ճանապարհ։

Մանուկ Աբեղյանի աշակերտը և հետևորդը փնտրելու-գտնելու իր ունակությամբ, վեր հանելու-մատուցելու իր հմտությամբ, նյութին մոտենալու-հետազոտելու իր ձևով, աշխատանքի վերջնական արդյունքի ստիպողական պահանջով ստեղծում է հետևորդների իր ուրույն դպրոցը։

Այն, ինչ արել և մինչև այժմ էլ անում է Արամ Ղանալանյանը, ջանքի ու ժամանակի տարողությամբ, մանրակրկիտ փնտրողությամբ նյութի հավաքման, դասակարգման և գիտական տեսքի բերելու իմաստով, մեկ մարդու գործ չէ։

Ղանալանյանը գործ ունի հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության հարուստ ու անըսպառ ժառանգության հետ, ժառանգություն, որն՝ սկսած V դարից, շաղ է տրված բազմաթիվ ու բազմաբնույթ գրավոր հուշարձանների, XIX դարի կեսերից սկսած՝ արևելահայ ու արևմտահայ ազգագրական, բանահյուսական ժողովածուների, տարբեր բնույթի պարբերականների, ուղեգրությունների ու հուշագրությունների մեջ, անհատ բանահավաքների, ազգագրագետների տպագիր ու անտիպ արխիվներում և այլուր և, վերջապես, ժառանգություն, որը մինչև օրս էլ ապրում է ժողովրդի հիշողության, երևակայության ու կենդանի խոսքի մեջ։ Այդ վիճակում նման նյութի հենց միայն ի մի բերելը, զատելն ու զտելը երկար տարիների վիթխարի աշխատանք է պահանջում։

Ղանալանյանն այդ աշխատանքին հենց սկզբից մոտենում է փորձառու գիտնականի հմտի-մացությամբ, պարզում նյութի ժանրային սահմանները, տալիս ժանրի գիտական սահմանումներ ու որոշակի տարբերակում, ստեղծում դասակարգման ուրույն ու նոր սխեմա, նոր ո՛չ

միայն հայ բանագիտության մեջ, այլև՝ ուսու և օտարու ճ՛վ մեզ մոտ, և՛ դրսում բանագիտությունը գեոևս չի մշակել ավանդությունների ու ավանդագրությունների ժանրային որոշարկման ու դասակարգման միասնական, կայուն սխեմա։ Ջեռքի տակ ունենալով ուսու և օտար նույնատիպ ժողովածուների տարբեր ելակետերով կազմված, այն էլ թվով ոչ մեծ հրատարակությունները, Ղանալանյանը ժամանակին նկատել է դրանց թերի ու խոցելի կողմերը և ելակետ ունեցել առաջին հերթին նյութի թելադրանքի։ Զանց առնելով դասակարգման այբբենական-բառարանային, անվանական-առարկայական եղանակները, որոնք բավականին պարզ ու դյուրին էին, Ղանալանյանը գտել է նյութի ներքին էությունից բխող իմաստային-թեմատիկ դասակարգման սխեմա։ Նախորդների փորձի քննադատական մոտեցմամբ և հենց նյութի վրա ձևված, Ղանալանյանի կողմից մշակված այս սխեման գիտական մեծ ավանդ է ավանդությունների դասակարգման ու մատուցման գործում։

«Ավանդապատում» սովորածավալ գրքի մեծագույն մասը (415 էջ) կազմում է ավանդությունների ու ավանդագրությունների հարուստ ու բազմաբովանդակ ժողովածուն՝ ավելի քան 900 նմուշի ընգրկմամբ, իրենց համապատասխան 400 տարբերակներով։

Ժողովածուի առավել մեծ մասը ստուգաբանական և բացատրական ավանդություններն են (276 էջ)։ Կարճառոտ ու փոքրածավալ այդ ստեղծագործություններից յուրաքանչյուրը ժողովրդի ըմբռնման, մեկնաբանման, պատկերացումների յուրօրինակ արտահայտությունը լինելուց բացի պահում է պատմական որոշակի հիշողություններ՝ կապված մարդկանց, առարկաների ու տեղավայրերի անունների, վանքերի, կամուրջների, խաչքարերի, այլ հուշարձանների ու շինությունների կառուցման ժամանակի, միջոցների ու հեղինակների, դրդապատճառների ու հանգամանքների մասին։ Դրանք յուրովի արտացոլում են ժողովրդի այն ձգտման, երբ նա ուզում է բացատրել ու իմաստավորել իրեն շրջապատող աշխարհը, այն ամենը, ինչի հետ նա ամենօրյա շփման մեջ է, ստուգաբանել անհայտ ժամանակներից եկող և արդեն անհասկա-

* Արամ Ղանալանյան, Ավանդապատում, Օրևան, ԳԱ հրատարակչություն, 1969, ՃՂ+530 էջ։

նալի այն բառերն ու դարձվածքները, որոնք սերունդների հիշողության ու ավանդության ուժով ապրել են դարեր, բայց և դարերի մեջ էլ կորցրել կամ փոխել են իրենց նախնական իմաստը:

Ստուգաբանական ավանդությունները, երբեմն պատմական ճշգրտությունից շեղվող, անստույգ կերպարանքով անգամ մնում են անփոխարինելի վկայություններ ժողովրդի ծագման, պատմության, մյուս ժողովուրդների հետ ունեցած նյութական ու մշակութային կապերի մասին: Հնագիտական նյութերի, գրավոր աղբյուրների հետ հավասար նրանք կարող են ծառայել զանազան կնճռոտ հարցերի լուսաբանմանը, երբեմն նույնիսկ լրացնելով առաջին երկուսի բացը: Այն, ինչ չի պահել պատմությունը կամ թաքցրել է իր տակ բնությունը, պահել է իր հիշողության մեջ մարդկությունը:

Ժամանակների հերթափոխությունը բերում է իր հետ հավիտենական երևույթների՝ արև, լուսին, աստղեր, երկինք, երկիր, լեռներ, լճեր, ծագման-առաջացման հարափոփոխ պատկերացումներ ու մեկնաբանություններ: Այս իմաստով հասուն կ հետաքրքրություն են ներկայացնում, ինչպես Ղանալանյանն է կոչում, բացատրական ավանդությունները, որոնք՝ պարունակելով հանդերձ մարդկային իրական, առարկայական մտածողության հնագույն շերտեր, ժամանակի ընթացքում կորցնելով այդ երևույթների ու իրական մտածողության կոնկրետ կապը, դարձել են պատկերավոր մտածողության գեղեցիկ նմուշներ: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ արդեն միայն պատկերավոր մտածողության այդ նմուշները ժողովրդի մոտ ներծծված են ներքին հավատով իր իսկ պատմածի իսկության նկատմամբ, չնայած՝ դրանց մեջ արտահայտվում է նաև ժողովրդի այն գիտակցությունը, որ դա եղել է անհիշելի ժամանակներում:

Վարքաբանական ավանդությունները (100 էջ) համեմատաբար ավելի ծավալուն սյուժե ունեցող, գեղարվեստական արտահայտչամիջոցներով ավելի հարուստ ստեղծագործություններ են բազմաթիվ իրական ու մտացածին անձնավորությունների մասին: Դրանց հիմքում ընկած կենսագրական հավաստի կամ անստույգ տեղեկություններն ու պատմությունները ճանաչողական մեծ արժեք ունեն թե՛ այդ կոնկրետ անձնավորությունների կենսագրական տվյալների և թե՛ նրանց գաղափարատիպեր լինելու իմաստով: Այդ ավանդությունները, որոնք հյուսված են բոլոր նշանավոր անձանց շուրջ, որոնք մեծ դեր են խաղացել պատմության, կրոնի, մշակութի մեջ, արտահայտում են ժողովրդի անառա շիջնորդավորված վերաբերմունքը դեպի այդ մարդիկ ու նրանց արարքները և դրա-

նով իսկ դառնում այդ մարդկանց ապրած դարաշրջանի չափանիշներ:

Ժամանակների ու մտածողության այսպիսի շերտավորմամբ ու շաղախով ավանդություններն անհատնում հնարավորություններ են բացում տարբեր բնագավառի ուսումնասիրողների առջև:

Ավանդությունները, սակայն, կրելով դարերի շերտավորումն ու ժամանակի բեռը, շատ հաճախ ներկայանում են իրենց մթագնված ու դժվար ճանաչելի տեսքով: Ղանալանյանը տալիս է այդ նյութն զգալու, ճանաչելու, հետազոտելու գիտական մեթոդ: Եթե հնարավոր է, նյութի հետ գնալ դարերի խորքը, բացել նրա պատմական, աշխարհագրական միջուկը, ստեղծման ժամանակը, սոցիալական, քաղաքական, տրեստեսական նախադրյալները, ցույց տալ ժամանակի ու տարածության մեջ կրած նրա փոփոխությունները, նրա միջոցով վեր հանել ժողովրդի պատմական ճակատագիրը, կրոնահավատալիքային մտածելակերպը, վերաբերմունքը դեպի բնությունը, հասարակությունը, մարդը, հավատամքը, պարզել այս բոլորից բխող և սրանց հետ կապված նյութի հարատևման գաղտնիքը—ահա Ղանալանյանի ուսումնասիրության հիմնական մեթոդը, որը մի գործից մյուսը կատարելագործվում է:

Հակառակ վիպական մյուս ժանրերի, ավանդությունները բոլորովին ուսումնասիրված չեն եղել մեզանում: Դրանք տարբեր բանագետներ նույնացրել են վիպական ժանրի այլ ստեղծագործությունների հետ: Ավանդությունների ստույգ տեղը որոշելու համար Ղանալանյանը բերում է այն բոլոր ժանրերն ու տեսակները, որոնց հետ նույնացվել կամ շփոթվել է ավանդությունը: Նա իրար կողքի է դնում. ա) ավանդություն—առասպել, բ) ավանդություն—մեֆիսթ, գ) ավանդություն—էպոս, դ) ավանդություն—կենդանակա—էպոս, առակ, ե) ավանդություն—ա—մեկդոս, զ) ավանդություն—վիպերգ ժանրերը, բնութագրում սրանցից յուրաքանչյուրը, և ինքնըստինքյան բացահայտվում է ավանդությունների և՛ տեղը դրանց շարքում, և՛ ժանրային առանձնահատկությունները, և՛ պատմական, գիտական ու գեղարվեստական արժեքը:

Ղանալանյանը ցույց է տալիս նաև այն պատճառները, որոնք կարող էին հիմք հանդիսանալ նման շփոթի ու ավանդությունների դիմադրման համար: Նա հետևում է ընթերցողի առջև բացում է բանահյուսական ժանրերի փոփոխման ու փոխակերպման, փոխհարաբերությունների ու փոխադեցությունների ողջ ընթացքը, պարզում այն առարկայական պատճառները, որոնք կարող են մեծ դժվարություններ հարուցել ժանրի տարբերակման գործում:

Բանահյուսական մյուս ստեղծագործություն-

ների հետ ավանդությունների դարավոր գոյակցության փաստը չէր կարող շանդրադառնալ ավանդության և՛ ներքին առանձնահատկությունների, և՛ արտաքին ձեռքի վրա: Ղանալանյանը խոսում փաստարկներով ու օրինակներով ցույց է տալիս, թե ինչպես ավանդությունը կարող է հագնել առասպելական կամ էլ հեքիաթային զգեստ և հակառակը՝ առասպելը, հեքիաթը, կապվելով որոշակի պատմական միջավայրի, աշխարհագրական տեղանքի կամ հայտնի անձնավորություն հետ, դառնալ ավանդություն, ինչպես դարձիք ընթացքում ժողովրդի, նրա պատմության ու ճակատագրի համար որևէ բախտորոշ անցքի: Երբ շուրջ տարբեր ավանդությունների ու ավանդազրույցների համախմբումը կարող է առաջացնել ժողովրդական վեպ՝ ավելի լայն կտավի ստեղծագործություն: Եվ կամ ինչպես ավանդությունների մի տարածված ու սիրված հերոսի անվան հետ կարող են կապվել սրամիտ արարքներ, արախոսություններ, և ավանդության հերոսը կարող է դառնալ զվարճախոս, կատակարան, իսկ ավանդությունը՝ երգիծական հորինվածք, անեկդոտ:

Ուսումնասիրության առաջին բաժնում ավանդությունների ժանրային տարբերակմանը հետևում է ժանրային առանձնահատկությունների բնորոշումը՝ կապված նրանց ծնող համապատասխան պատմական, սոցիալական, էթնիկական, կենցաղային գործոնների հետ:

Ղանալանյանը բնորոշում է ավանդությունները նաև ըստ նրանց բնույթի՝ ազգային, միջազգային և եկամտո՝ առաջնային և հիմնական տեղը հատկացնելով առաջիններին:

Ուսումնասիրության երկրորդ և ծավալուն բաժինը նվիրված է ավանդությունների վերլուծությանը:

«Ավանդապատում»-ում Ղանալանյանի մեծագույն հաղթանակը, սակայն, մնում է նյութի դասակարգման նրա սխտեմը: Նյութի ներքին հաստատվածությունները, որոնք կարող են չափազանց մեծ դժվարություններ հարուցել դասակարգման գործում, Ղանալանյանի գտած սխտեմի դեպքում հասել են նվազագույն չափերի: Եվ այդպես պատճառով, որ նա ավանդությունների դասակարգման մեջ մեկնակետ է ունեցել «ոչ թե ավանդությունների բովանդակության մոտիվները, գործող անձանց ու առարկաները, այլ նրանց էությունը» (էջ ԻԸ): Երկար տարիներ և անընդմեջ զբաղվելով այդ նյութով, Ղանալանյանը նկատել է, որ ավանդությունների և ավանդազրույցների ճշդ մեծամասնության ներքին էությունը առարկաների, բնության՝ երևույթների անունների ժողովրդական ստուգաբանությունն է, նրանց ծագման, առաջացման ժողովրդական բացատրությունը, գործող ան-

ձանց կենսագրական ստույգ կամ մտացածին փաստերի ժողովրդական մեկնաբանությունը: Նկատելով այս ներքին օրինաչափությունները, Ղանալանյանը տվել է նյութի հետևյալ դասակարգումը՝ ա. Ստուգաբանական ավանդություններ, բ. Բացատրական ավանդություններ, գ. Վարքաբանական ավանդազրույցներ:

Դասակարգման այս հիմնական սկզբունքի կողքին Ղանալանյանը տվել է նաև նյութի ներքին ղափառման սկզբունքը: Նյութը նա այստեղ էլ դասավորում է ոչ թե ըստ նրա բովանդակության մոտիվների, այլ՝ ըստ առարկաների, առարկաներն էլ ոչ թե առանձին, այլ իրենց համապատասխան խմբավորումների մեջ: Ստուգաբանական և բացատրական ավանդությունները ներկայանում են իրենց այդպիսի 11 խմբավորումներով՝ ա. Արև, լուսին, աստղեր, բ. Լեռներ, ժայռեր, բլուրներ, գ. Քարայրներ, ձորեր, դաշտեր և այլն:

Վարքաբանական ավանդությունները՝ իրենց 4 խմբավորումներով՝ ա. Քաղաքներ, իշխաններ, զորավարներ, բ. Գիտնականներ, գորգներ, արվեստագետներ, գ. Բիրլիական և ավանդական դեմքեր, դ. Սրբեր և հոգեորականներ:

Առարկաների նման խմբավորմանը զուգահեռ Ղանալանյանը լուծում է մի խնդիր ևս՝ խմբավորում ըստ տեղադրման վայրերի, գոտիների, ավանդության հենց ներքեում նշելով աշխարհագրական որոշակի վայրը: Եթե բանահյուսական այլ ժանրերի դեպքում սա կարող էր լինել միայն ուղեցույց, ավանդությունների դեպքում այն բխում է դրանց ժանրային առանձնահատկությունից, այսինքն՝ եթե բանավոր արձակի մյուս ժանրերը ծնվում ու ապրում են իրենց ինֆունուայն և անկախ կյանքով, ավանդությունների և՛ ծնունդը, և՛ կյանքը սերտորեն ու անբաժան կապված է որոշակի առարկաների, վայրերի ու անձնավորությունների հետ (էջ ԻԳ):

Եթե այս աշխարհագրական խմբավորման դեպքում համանման մոտիվները ցրվում են տարբեր էջերում և այդ իսկ պատճառով երբեմն կրկնվում, ապա շեշտվում է աշխարհագրական այն վայրն ու միջավայրը, որի հետ սերտորեն կապված է ավանդությունը և առանց որի դադարում է գոյություն ունենալուց: Եվ եթե մի հասկացության շեշտումը կատարվում է մյուս հասկացության շեշտագրկման հաշիվին, ապա դրա պատճառն էլ ոչ թե սկզբունքի խոցելիության մեջ է, այլ՝ նյութի ներքին հակասության, հակասություն, որը կարող է շենթարկվել ամենակատարյալ սկզբունքին անգամ: Այստեղ կարեորդ ոչ թե բազմատարր ու բազմաբնույթ, դժվար տրվող նյութի դասակարգման նկատմամբ ներկայացվող բազմակողմանի պահանջ-

ներն են, այլ՝ մի հիմնական, առաջնային խնդրի լուծումը, իսկ այդ հիմնական խնդրի լուծումը լանջանք չունի և փայլուն կերպով, ընկերված ավանդությունների ժանրային առանձնահատկություններից, նա ցուցադրել է դրանց հիմնական էությունը, խմբավորել ըստ նրանց առարկայական արտաքին պատկերի, իսկ տեժանց գեպրում՝ հիմնական կոչման և դերի, ընդ այդ ամենը ավել է տեխնիկական տեսակետից անպատճառ անպակաս կարգ ու կանոնի մեջ, որ ժողովածուն ստացվել է թե՛ դիտական, թե՛ մասնայական առումով խիստ մատչելի:

Միայն՝ գուցե հնարավոր լինե՞ր նյութի դասավորման մեջ էլ ստուգաբանական ավանդությունների գատնել քաջատրական ավանդություններից, ինչպես այդ արված է դասակարգման սկզբունքի մեջ: Այստեղ էլ, անշուշտ, կծնվեն նյութի ներքին հակասություններից բխող մեծ դժվարություններ, բայց ժողովածուն դրանից շատ կշահեր:

Նյութի ճիշտ դասակարգումն արդեն նյութի ուսումնասիրություն է և հետագա ուսումնասիրությունների լայն հնարավորություն: Ղանայանի աշխատությունների մեծագույն արժանիքը ոչ միայն բոլոր ժամանակների քննությանը ներկայացվող նյութն է (ամենալավ ուսումնասիրություններն անգամ կարող են չդիմանալ այդ քննությանը, իսկ նյութն այդ վախճ շունի ժամանակի հանդեպ), այլև այն, որ Ղանալանյանն իր դասակարգումով, բաժինների ու ենթաբաժինների իր համակարգումով հուշում է հետազոտությունների անսպառ թեմաներ ու խնդիրներ: Ընդ ո՛չ միայն առաջադրում է խնդիրներ, այլև մեծապես օգնում այդ խնդիրների լուծմանը պատմական, աշխարհագրական, բարբառային, ռեալիստ լրացուցիչ տեղեկանքներով ու բացատրություններով, բազում տարբերակների տեղին ու հմուտ ցուցադրմամբ, միջազգային ու եկամուտ նյութի զուգորդմամբ, իմաստային-թեմատիկ, անվանական-առարկայական ուղեցույց համարաբարաններով, անձնանունների և տեղանունների ցանկերով, ծանոթագրություններով և աղբյուրների հղումներով:

«Աղբյուրներ և ծանոթագրություններ» բաժնում (171 էջ) ավանդության հերթական թվահամարի ու վերնագրի կողքին տրվում են անհրաժեշտ տեղեկություններ գրառողի, գրառման ժամանակի ու վայրի մասին, տպագիր կամ ձեռագիր աղբյուրի հասցեն: Այս բոլորի կողքին Ղանալանյանը բերում է հարակից ծանոթություններ ավանդության մասին կամ էլ երբեմն հավելյալ ավանդություններ, որոնք նա՝ դասակարգման իր սկզբունքից ելնելով և շփոթից խուսափելով, չի դրել տվյալ ավանդության կողքին: Դրանք մեծ մասամբ գրառողի կամ հեղինակի հավելյալ ծանոթությունները կամ վերապատմաններն են, որոնք տվյալ ավանդության համար յուրօրինակ լրացուցիչ նյութ են:

Ղանալանյանը դասակարգման մեջ եղած որոշ բացեր հմտորեն լրացնում է ծանոթագրությունների մեջ: Նման մոտիվների դեպքում նա նշում է ավանդությունների թվահամարները, սեղմ ձևով իրար մոտ է բերում տարբեր ավանդություններում ցրված այդ մոտիվները: Այս բոլորը բարձրացնում են «Ծանոթագրություններ» բաժնի դիտական մակարդակը:

Գրքին կցված է նաև «Հայկական ավանդությունների ուղեցույց քարտեզ», որը, ցավոք, խոսուն չէ: Նման քարտեզների հնարավորությունները դիտական ուսումնասիրությունների առումով ավելի լայն են, քան միայն ավանդությունների տարածման վայրերը նշելը: Չնայած դրան կ՛քարտեզը, կ՛ավանդության նյութ դարձած տեղավայրերի երեք տասնյակ լուսանկարները լրացնում, ամրողացնում են «Ավանդապատում» արժեքավոր աշխատությունը:

Արամ Ղանալանյանը «Ավանդապատում» վրա աշխատել է շուրջ երկու տասնամյակ: Բայց ժամանակը միշտ պարտք է մնում Ղանալանյանի համբերության, համառության, ջանքի ու վերջնական արդյունքի առջև: Պարտք է մնում նաև բանագիտությունը «Հայ շինականի աշխատանքի երգերի», «Առաժանի» և «Ավանդապատում» հիման վրա սպասվող բազում գիտական ուսումնասիրություններով:

Վ. Շ. ՍՍՀՄԿՅԱՆ